**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔ**
**ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ**
**23 հունիսի 2026 թվական**

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 5
# ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ 6-ՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ 5-ՐԴ ՆԻՍՏԻ

Նիստին մասնակցում էր Երևանի ավագանու 52 անդամ:

Նիստը վարում էր Երևանի քաղաքապետ Տիգրան Ավինյանը:

Երևանի ավագանու նիստին հրավիրված էին Երևանի քաղաքապետի տեղակալներ՝ Սուրեն Գրիգորյանը և Սարգիս Մադաթյանը, քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարի ժամանակավոր պաշտոնակատար Վիլեն Արևշատյանը, քաղաքապետի խորհրդականներ՝ Կամո Արեյանը, Լուսինե Դայանը և Արման Լազրյանը, քաղաքապետարանի աշխատակազմի իրավաբանական վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար Արմինե Ստեփանյանը, կազմակերպական վարչության պետ Արմինե Վարդանյանը, անշարժ գույքի կառավարման վարչության պետ Վահան Խաչատրյանը, բնապահպանության վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար Սիրարփի Հայկազյանը, լրատվության վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար Օֆելյա Սիմոնյանը, ֆինանսական վարչության պետ Քրիստինե Ավետիսյանը, մշակույթի և տուրիզմի վարչության պետ Գոշ Սարգսյանը, տրանսպորտի վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար Գարեգին Գրիգորյանը, կոմունալ տնտեսության վարչության պետ Արսեն Կարոյանը, մատակարարման և տեխնիկական սպասարկման վարչության պետ Սևակ Մելքոնյանը, առևտրի, ծառայությունների և գովազդի վարչության պետ Արմեն Առաքելյանը և Երևանի քաղաքապետի մամուլի քարտուղար Արտյոմ Կարապետյանը:

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասով՝ Երևանի քաղաքապետ Տիգրան Ավինյանը հայտնեց, որ Երևանի ավագանու 7-րդ նստաշրջանի հերթական նիստը կգումարվի 2026 թվականի սեպտեմբերի 8-ին, ժամը 10.00-ին:

Երևանի քաղաքապետ Տիգրան Ավինյանը հայտնեց, որ Երևանի ավագանու 2026 թվականի հունիսի 23-ի նիստի օրակարգում ընդգրկված է 46 հարց, որից՝ 2-45-րդ հարցերը չզեկուցվող են.

1. Երևանի ավագանու 6-րդ նստաշրջանի 5-րդ նիստի օրակարգը հաստատելու մասին:

2. Լևոն Հայրապետյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակի տեղադրման մասին: (Չզեկուցվող)

3. Ժիրայր Ավետիսյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակի տեղադրման մասին: (Չզեկուցվող)

4. Գրիգոր Ավագյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակի տեղադրման մասին: (Չզեկուցվող)

5. Երևան քաղաքում փողոցներ, նրբանցքներ և փակուղիներ անվանակոչելու մասին: (Չզեկուցվող)

6. Երևան քաղաքում Գուրգեն Էդիլյանի անվամբ փողոց անվանակոչելու մասին: (Չզեկուցվող)

7. Երևան քաղաքի ավագանու շահերը ներկայացնելու համար լիազորություններ վերապահելու մասին: (Չզեկուցվող)

8. Երևանի քաղաքապետի 2026 թվականի հունիսի 8-ի N 2896-Ա որոշումը հաստատելու մասին: (Չզեկուցվող)

9. Թանգարանային առարկաները ժամանակավոր պահպանության հանձնելու մասին: (Չզեկուցվող)

10. Թանգարանային առարկաները ժամանակավոր պահպանության հանձնելու մասին: (Չզեկուցվող)

11. Թանգարանային առարկաները ժամանակավոր պահպանության հանձնելու մասին: (Չզեկուցվող)

12. Թանգարանային առարկաները ժամանակավոր պահպանության հանձնելու մասին: (Չզեկուցվող)

13. Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի Շրջանցիկ թունել փողոց h.42/1 հասցեում մսուր-մանկապարտեզի կառուցման նախատեսվող գործունեության իրականացմանը նախնական համաձայնություն տրամադրելու մասին: (Չզեկուցվող)

14. Երևան քաղաքի Աջափնյակ վարչական շրջանի Հաղթանակի 1-ին փողոց h.70 հասցեում պահեստային շինության կառուցման նախատեսվող գործունեության իրականացմանը նախնական համաձայնություն տրամադրելու մասին: (Չզեկուցվող)

15. Երևան քաղաքի Աջափնյակ վարչական շրջանի Շիրազի փողոց h.11 հասցեում Երևանի Զորայր Խալափյանի անվան h.156 հիմնական դպրոցի կառուցման նախատեսվող գործունեության իրականացմանը նախնական համաձայնություն տրամադրելու մասին: (Չզեկուցվող)

16. Երևան քաղաքի Աջափնյակ վարչական շրջանի Արզումանյան փողոց h.17 հասցեում բազմահարկ բնակելի շենքի կառուցման նախատեսվող գործունեության իրականացմանը նախնական համաձայնություն տրամադրելու մասին: (Չզեկուցվող)

17. Երևան քաղաքի Աջափնյակ վարչական շրջանի Արզումանյան փողոց հ.10 հասցեում բազմահարկ բնակելի շենքի կառուցման նախատեսվող գործունեության իրականացմանը նախնական համաձայնություն տրամադրելու մասին: (Զեկուցվող)
18. Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի Այգեստան 11-րդ փողոց հ.93 բնակելի տուն, հ.93/1, հ.97 բնակելի տուն և Գ.Ջահուկյան փողոց հ.95/2 հասցեներում բազմաբնակարան բնակելի շենքի կառուցման նախատեսվող գործունեության իրականացմանն անհամաձայնություն տրամադրելու մասին: (Զեկուցվող)
19. Սանհանգույցների վերանորոգման նախագիծը որպես նվիրատվություն ընդունելու մասին: (Զեկուցվող)
20. Կազմակերպված ծառայողական ավտոկայանատեղերի շահագործումը շարունակելու իրավունք տալու մասին: (Զեկուցվող)
21. Կազմակերպված ծառայողական ավտոկայանատեղի շահագործումը շարունակելու իրավունք տալու մասին: (Զեկուցվող)
22. Ծառայողական ավտոկայանատեղ կազմակերպելու իրավունք տալու մասին: (Զեկուցվող)
23. Ծառայողական ավտոկայանատեղ կազմակերպելու իրավունք տալու մասին: (Զեկուցվող)
24. Ծառայողական ավտոկայանատեղ կազմակերպելու իրավունք տալու մասին: (Զեկուցվող)
25. Ծառայողական ավտոկայանատեղ կազմակերպելու իրավունք տալու մասին: (Զեկուցվող)
26. Ծառայողական ավտոկայանատեղ կազմակերպելու իրավունք տալու մասին: (Զեկուցվող)
27. «Երևանի ավտոբուս» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրական կապիտալն ավելացնելու և կանոնադրության փոփոխությունը հաստատելու մասին: (Զեկուցվող)
28. «Սուրբ Աստվածամայր» բժշկական կենտրոն փակ բաժնետիրական ընկերության կանոնադրական կապիտալն ավելացնելու և կանոնադրության փոփոխությունը հաստատելու մասին: (Զեկուցվող)
29. «Թիվ 4 պոլիկլինիկա» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրական կապիտալն ավելացնելու և կանոնադրության փոփոխությունը հաստատելու մասին: (Զեկուցվող)
30. «Մալաթիա-Սեբաստիա առողջության կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրական կապիտալն ավելացնելու և կանոնադրության փոփոխությունը հաստատելու մասին: (Զեկուցվող)
31. «Երևանի «Տիգրան Մեծ» առողջության կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրական կապիտալն ավելցնելու և կանոնադրության փոփոխությունը հաստատելու մասին: (Զեկուցվող)
32. Երևան համայնքի սեփականություն համարվող 50 տոկոսից ավելի բաժնեմաս ունեցող փակ բաժնետիրական ընկերությունների կողմից 2025 թվականի տարեկան

գործունեության արդյունքներով առաջացած զուտ շահույթի բաշխման ուղղությունները և Երևան քաղաքի բյուջե վճարման ենթակա շահութաբաժինների չափերը հաստատելու մասին: (Զեկուցվող)

33. Երևան քաղաքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 26-ի N41-Ա որոշման մեջ փոփոխություններ և լրացում կատարելու մասին: (Զեկուցվող)

34. Երևան քաղաքի ավագանու 2025 թվականի դեկտեմբերի 23-ի N483-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին: (Զեկուցվող)

35. Երևան քաղաքի ավագանու 2026 թվականի ապրիլի 21-ի N544-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին: (Զեկուցվող)

36. Երևան քաղաքի ավագանու 2025 թվականի դեկտեմբերի 23-ի N463-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին: (Զեկուցվող)

37. Հողամասերի փոխանակությանը համաձայնություն տալու մասին: (Զեկուցվող)

38. Գույքը սեփականության իրավունքով անհատույց օտարելու (նվիրելու) մասին: (Զեկուցվող)

39. Գույքը սեփականության իրավունքով անհատույց օտարելու (նվիրելու) մասին: (Զեկուցվող)

40. Երևան քաղաքում Անանիա Շիրակացու անվամբ փողոց անվանակոչելու մասին: (Զեկուցվող)

41. Երևան քաղաքում Կոստանդին Երզնկացու անվամբ փողոց անվանակոչելու մասին: (Զեկուցվող)

42. Երևան քաղաքում Ավետ Տերտերյանի անվամբ փողոց անվանակոչելու մասին: (Զեկուցվող)

43. Երևան քաղաքում Գրիգոր Եղիազարյանի անվամբ փողոց անվանակոչելու մասին: (Զեկուցվող)

44. Երևան քաղաքում Էդուարդ Բաղդասարյանի անվամբ փողոց անվանակոչելու մասին: (Զեկուցվող)

45. Երևան քաղաքում փողոց անվանափոխելու մասին: (Զեկուցվող)

46. Գույքի նվիրատվության մասին: (Զեկուցվող)

Երևանի քաղաքապետ Տիգրան Ավինյանը տեղեկացրեց, որ 2026 թվականի հունիսի 23-ի նիստի օրակարգի 25-րդ չզեկուցվող՝ «Ծառայողական ավտոկայանատեղ կազմակերպելու իրավունք տալու մասին» հարցի վերաբերյալ գլխադասային՝ քաղաքաշինության և հողօգտագործման հարցերի մշտական հանձնաժողովի կողմից տրվել է բացասական եզրակացություն:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Երևանի քաղաքապետ Տիգրան Ավինյանի կողմից օրակարգի 25-րդ չզեկուցվող՝ «Ծառայողական ավտոկայանատեղ կազմակերպելու իրավունք տալու մասին» հարցը հանվեց քննարկումից:

Երևանի ավագանու «Հանրային ձայն» խմբակցության ղեկավար Վահան Ավագյանի և «Մայր Հայաստան» խմբակցության ղեկավար Մանուկ Սուքիասյանի կողմից  առաջարկվեց չզեկուցվող 45-րդ՝ «Երևան քաղաքում փողոց անվանափոխելու մասին» հարցը քննարկել զեկուցվող հարցերի ընթացակարգին համապատասխան:

Քվեարկություն.

Կողմ՝ 24, դեմ՝ 33, ձեռնպահ՝ 0

Առաջարկը չընդունվեց:

Երևանի ավագանու «Ազգային առաջընթաց» խմբակցության անդամ Իոսիֆ Կուբատյանն առաջարկեց օրակարգի չզեկուցվող 16-րդ՝ «Երևան քաղաքի Աջափնյակ վարչական շրջանի Արզումանյան փողոց հ.17 հասցեում բազմահարկ բնակելի շենքի կառուցման նախատեսվող գործունեության իրականացմանը նախնական համաձայնություն տրամադրելու մասին» և 17-րդ՝ «Երևան քաղաքի Աջափնյակ վարչական շրջանի Արզումանյան փողոց հ.10 հասցեում բազմահարկ բնակելի շենքի կառուցման նախատեսվող գործունեության իրականացմանը նախնական համաձայնություն տրամադրելու մասին» հարցերի վերաբերյալ ներկայացնել առավել մանրամասն պարզաբանումներ:

Ներկայացված առաջարկությունն ընդունվեց և Երևանի քաղաքապետ Տիգրան Ավինյանի կողմից  վերոնշյալ նախագծերի վերաբերյալ ներկայացվեցին պարզաբանումներ:

Երևանի քաղաքապետ Տիգրան Ավինյանը հայտարարեց, որ քվեարկության է դրվում  Երևանի ավագանու 2026 թվականի հունիսի 23-ի հերթական նիստի օրակարգի նախագիծը.

1. Երևանի ավագանու 6-րդ նստաշրջանի 5-րդ նիստի օրակարգը հաստատելու մասին:
2. Լևոն Հայրապետյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակի տեղադրման մասին: (Չզեկուցվող)
3. Ժիրայր Ավետիսյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակի տեղադրման մասին: (Չզեկուցվող)
4. Գրիգոր Ավագյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակի տեղադրման մասին: (Չզեկուցվող)
5. Երևան քաղաքում փողոցներ, նրբանցքներ և փակուղիներ անվանակոչելու մասին: (Չզեկուցվող)
6. Երևան քաղաքում Գուրգեն Էդիլյանի անվամբ փողոց անվանակոչելու մասին: (Չզեկուցվող)
7. Երևան քաղաքի ավագանու շահերը ներկայացնելու համար լիազորություններ վերապահելու մասին: (Չզեկուցվող)
8. Երևանի քաղաքապետի 2026 թվականի հունիսի 8-ի N 2896-Ա որոշումը հաստատելու մասին: (Չզեկուցվող)
9. Թանգարանային առարկաները ժամանակավոր պահպանության հանձնելու մասին: (Չզեկուցվող)

10. Թանգարանային առարկաները ժամանակավոր պահպանության հանձնելու մասին: (Զեկուցվող)
11. Թանգարանային առարկաները ժամանակավոր պահպանության հանձնելու մասին: (Զեկուցվող)
12. Թանգարանային առարկաները ժամանակավոր պահպանության հանձնելու մասին: (Զեկուցվող)
13. Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի Շրջանցիկ թունել փողոց հ.42/1 հասցեում մսուր-մանկապարտեզի կառուցման նախատեսվող գործունեության իրականացմանը նախնական համաձայնություն տրամադրելու մասին: (Զեկուցվող)
14. Երևան քաղաքի Աջափնյակ վարչական շրջանի Հաղթանակի 1-ին փողոց հ.70 հասցեում պահեստային շինության կառուցման նախատեսվող գործունեության իրականացմանը նախնական համաձայնություն տրամադրելու մասին: (Զեկուցվող)
15. Երևան քաղաքի Աջափնյակ վարչական շրջանի Շիրազի փողոց հ.11 հասցեում Երևանի Զորայր Խալափյանի անվան հ.156 հիմնական դպրոցի կառուցման նախատեսվող գործունեության իրականացմանը նախնական համաձայնություն տրամադրելու մասին: (Զեկուցվող)
16. Երևան քաղաքի Աջափնյակ վարչական շրջանի Արզումանյան փողոց հ.17 հասցեում բազմահարկ բնակելի շենքի կառուցման նախատեսվող գործունեության իրականացմանը նախնական համաձայնություն տրամադրելու մասին: (Զեկուցվող)
17. Երևան քաղաքի Աջափնյակ վարչական շրջանի Արզումանյան փողոց հ.10 հասցեում բազմահարկ բնակելի շենքի կառուցման նախատեսվող գործունեության իրականացմանը նախնական համաձայնություն տրամադրելու մասին: (Զեկուցվող)
18. Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի Այգեստան 11-րդ փողոց հ.93 բնակելի տուն, հ.93/1, հ.97 բնակելի տուն և Գ.Ջահուկյան փողոց հ.95/2 հասցեներում բազմաբնակարան բնակելի շենքի կառուցման նախատեսվող գործունեության իրականացմանն անհամաձայնություն տրամադրելու մասին: (Զեկուցվող)
19. Սանհանգույցների վերանորոգման նախագիծը որպես նվիրատվություն ընդունելու մասին: (Զեկուցվող)
20. Կազմակերպված ծառայողական ավտոկայանատեղերի շահագործումը շարունակելու իրավունք տալու մասին: (Զեկուցվող)
21. Կազմակերպված ծառայողական ավտոկայանատեղի շահագործումը շարունակելու իրավունք տալու մասին: (Զեկուցվող)
22. Ծառայողական ավտոկայանատեղ կազմակերպելու իրավունք տալու մասին: (Զեկուցվող)
23. Ծառայողական ավտոկայանատեղ կազմակերպելու իրավունք տալու մասին: (Զեկուցվող)
24. Ծառայողական ավտոկայանատեղ կազմակերպելու իրավունք տալու մասին: (Զեկուցվող)
25. Ծառայողական ավտոկայանատեղ կազմակերպելու իրավունք տալու մասին: (Զեկուցվող)

26. «Երևանի ավտոբուս» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրական կապիտալն ավելացնելու և կանոնադրության փոփոխությունը հաստատելու մասին: (Զեկուցվող)
27. «Սուրբ Աստվածամայր» բժշկական կենտրոն փակ բաժնետիրական ընկերության կանոնադրական կապիտալն ավելացնելու և կանոնադրության փոփոխությունը հաստատելու մասին: (Զեկուցվող)
28. «Թիվ 4 պոլիկլինիկա» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրական կապիտալն ավելացնելու և կանոնադրության փոփոխությունը հաստատելու մասին: (Զեկուցվող)
29. «Մալաթիա-Սեբաստիա առողջության կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրական կապիտալն ավելացնելու և կանոնադրության փոփոխությունը հաստատելու մասին: (Զեկուցվող)
30. «Երևանի «Տիգրան Մեծ» առողջության կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրական կապիտալն ավելացնելու և կանոնադրության փոփոխությունը հաստատելու մասին: (Զեկուցվող)
31. Երևան համայնքի սեփականություն համարվող 50 տոկոսից ավելի բաժնեմաս ունեցող փակ բաժնետիրական ընկերությունների կողմից 2025 թվականի տարեկան գործունեության արդյունքներով առաջացած զուտ շահույթի բաշխման ուղղությունները և Երևան քաղաքի բյուջե վճարման ենթակա շահութաբաժինների չափերը հաստատելու մասին: (Զեկուցվող)
32. Երևան քաղաքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 26-ի N41-Ա որոշման մեջ փոփոխություններ և լրացում կատարելու մասին: (Զեկուցվող)
33. Երևան քաղաքի ավագանու 2025 թվականի դեկտեմբերի 23-ի N483-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին: (Զեկուցվող)
34. Երևան քաղաքի ավագանու 2026 թվականի ապրիլի 21-ի N544-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին: (Զեկուցվող)
35. Երևան քաղաքի ավագանու 2025 թվականի դեկտեմբերի 23-ի N463-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին: (Զեկուցվող)
36.Հողամասերի փոխանակությանը համաձայնություն տալու մասին: (Զեկուցվող)
37. Գույքը սեփականության իրավունքով անհատույց օտարելու (նվիրելու) մասին: (Զեկուցվող)
38. Գույքը սեփականության իրավունքով անհատույց օտարելու (նվիրելու) մասին: (Զեկուցվող)
39. Երևան քաղաքում Անանիա Շիրակացու անվամբ փողոց անվանակոչելու մասին: (Զեկուցվող)
40. Երևան քաղաքում Կոստանդին Երզնկացու անվամբ փողոց անվանակոչելու մասին: (Զեկուցվող)
41. Երևան քաղաքում Ավետ Տերտերյանի անվամբ փողոց անվանակոչելու մասին: (Զեկուցվող)
42. Երևան քաղաքում Գրիգոր Եղիազարյանի անվամբ փողոց անվանակոչելու մասին:

(Չզեկուցվող)
43. Երևան քաղաքում Էդուարդ Բաղդասարյանի անվամբ փողոց անվանակոչելու մասին: (Չզեկուցվող)
44. Երևան քաղաքում փողոց անվանափոխելու մասին: (Չզեկուցվող)
45. Գույքի նվիրատվության մասին: (Զեկուցվող)

**1. ԼՍԵՑԻՆ – Երևանի ավագանու 6-րդ նստաշրջանի 5-րդ նիստի օրակարգը հաստատելու մասին:**

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ –** կողմ՝ 39, դեմ՝ 16, ձեռնպահ՝ 1

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ:

Երևանի քաղաքապետ Տիգրան Ավինյանը հայտնեց, որ հիմք ընդունելով Երևան քաղաքի ավագանու 18.06.2009թ. N 1-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 71-րդ կետի 5-րդ ենթակետը՝ առաջնահերթ քվեարկության են դրվում օրակարգում ընդգրկված չզեկուցվող՝ 2-ից 44-րդ հարցերը:

**2. Լևոն Հայրապետյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակի տեղադրման մասին:**

ՈՐՈՇՎԵՑ - 1. Տալ համաձայնություն հայ մեծանուն բարերար Լևոն Հայրապետյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակը Մոսկովյան փողոցի h.31 հասցեում փակցնելու համար:

**3. Ժիրայր Ավետիսյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակի տեղադրման մասին:**

ՈՐՈՇՎԵՑ - 1. Տալ համաձայնություն հայ կինոռեժիսոր, ՀԽՍՀ արվեստի վաստակավոր գործիչ, պրոֆեսոր Ժիրայր Ավետիսյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակը Աբովյան փողոցի h. 36 հասցեում փակցնելու համար:

**4. Գրիգոր Ավագյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակի տեղադրման մասին:**

ՈՐՈՇՎԵՑ - 1. Տալ համաձայնություն տնտեսագետ, քաղաքական գործիչ, աշխարհագրագետ պրոֆեսոր, աշխարհագրական գիտությունների դոկտոր, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Գրիգոր Ավագյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակը Պուշկինի փողոցի h. 40 հասցեում փակցնելու համար:

**5. Երևան քաղաքում փողոցներ, նրբանցքներ և փակուղիներ անվանակոչելու մասին:**

ՈՐՈՇՎԵՑ - 1. Արաբկիր վարչական շրջանի.

1) Շրջանցիկ թունելի հ.19/1 հասցեից սկսվող և հ.01-003-0408-0195 կադաստրային ծածկագրով գույք հասնող ճանապարհահատվածն (հ.01-003-0408-0046 կադաստրային ծածկագրով ճանապարհահատվածի մի մասը) անվանակոչել Շրջանցիկ թունել փողոց, 1-ին փակուղի:

2. Էրեբունի վարչական շրջանի.

1) Դավիթ Բեկի փողոցի հ.45 տան մոտից սկսվող և Գաջեգործների փողոց հասնող ճանապարհահատվածն անվանակոչել Դավիթ Բեկի փողոց, 1-ին նրբանցք,

2) Երևանի Վրեժ Համբարձումյանի անվան հ.17 հիմնական դպրոցի մոտից սկսվող և Ռոստովյան փողոցի հ.27 հասցե հասնող ճանապարհահատվածն անվանակոչել Ազատամարտիկների պողոտա, 6-րդ նրբանցք:

3.Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի.

1) Հաղթանակ թաղամասի 1-ի փողոցի 9-րդ նրբանցքից սկսվող և Հաղթանակ թաղամասի 2-րդ փողոցի 5-րդ նրբանցք հասնող ճանապարհահատվածն անվանակոչել Հաղթանակ թաղամաս, 1-ին փողոց, 13-րդ նրբանցք,

2) Հաղթանակ թաղամասի 8-րդ փողոցի 1-ին նրբանցքից սկսվող և Հաղթանակ թաղամասի 8-րդ փողոցի 2-րդ նրբանցք հասնող ճանապարհահատվածն անվանակոչել Հաղթանակ թաղամաս, 8-րդ փողոց, 6-րդ նրբանցք:

4. Նուբարաշեն վարչական շրջանի.

1) Նուբարաշենի 2-րդ փողոցից սկսվող և հ.01-010-0202-0001 կադաստրային ծածկագրով գույք հասնող ճանապարհահատվածն անվանակոչել Նուբարաշենի 2-րդ փողոց, 1-ին փակուղի:

2) Նոր Ջմյուռնիայի փողոցից սկսվող և Նուբարաշենի 11-րդ փողոց հասնող ճանապարհահատվածն անվանակոչել Նուբարաշենի 21-րդ փողոց,

3) Նուբարաշենի 17-րդ փողոցից սկսվող և հ.01-010-0167-0066 կադաստրային ծածկագրով գույք հասնող ճանապարհահատվածն անվանակոչել Նուբարաշենի 17-րդ փողոց, 1-ին նրբանցք,

4) նախատեսվող Նուբարաշենի 21-րդ փողոցից սկսվող և նախատեսվող Նուբարաշենի 17-րդ փողոցի 1-ին նրբանցք հասնող ճանապարհահատվածն անվանակոչել Նուբարաշենի 21-րդ փողոց, 1-ին նրբանցք,

5) նախատեսվող Նուբարաշենի 21-րդ փողոցի միջնամասից սկսվող և հողածածկ տարածք հասնող ճանապարհահատվածն անվանակոչել Նուբարաշենի 21-րդ փողոց, 2-րդ նրբանցք,

6) նախատեսվող Նուբարաշենի 21-րդ փողոցի միջնամասից սկսվող և հողածածկ տարածք հասնող ճանապարհահատվածն անվանակոչել Նուբարաշենի 21-րդ փողոց, 3-րդ նրբանցք,

7) նախատեսվող Նուբարաշենի 21-րդ փողոցից սկսվող և հողածածկ տարածք հասնող ճանապարհահատվածն անվանակոչել Նուբարաշենի 21-րդ փողոց, 4-րդ նրբանցք:

5. Շենգավիթ վարչական շրջանի.

1) Արմեն Խոստիկյանի փողոցից սկսվող և Ներքին Շենգավիթի 13-րդ փողոց հասնող հատվածն անվանակոչել Արմեն Խոստիկյան փողոց, 1-ին նրբանցք:

**6. Երևան քաղաքում Գուրգեն Էդիլյանի անվամբ փողոց անվանակոչելու մասին:**

ՈՐՈՇՎԵՑ - 1. Երևան քաղաքի Ավան վարչական շրջանի Ավանի 6-րդ փողոցը (սկսվում է Ավանի 3-րդ փողոցից, հատելով Ավանի 5-րդ և Մարշալ Խուդյակովի փողոցները, հասնում Դավիթ Մալյան փողոց), 1-ին և 2-րդ նրբանցքներն անվանակոչել հայ անվանի հոգեբան, մանկավարժ, հասարակական գործիչ Գուրգեն Էդիլյանի անվամբ՝ «Գուրգեն Էդիլյան փողոց», «Գուրգեն Էդիլյան փողոց, 1-ին նրբանցք» (սկսվում է Ավանի 6-րդ փողոցից, կիսաշրջան կազմելով հասնում Ավանի 6-րդ փողոցի h.16 հասցեի հարակից տարածք):

**7. Երևան քաղաքի ավագանու շահերը ներկայացնելու համար լիազորություններ վերապահելու մասին:**

ՈՐՈՇՎԵՑ - 1. Երևան քաղաքի ավագանու շահերը ներկայացնելու համար լիազորել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի իրավաբանական վարչության ստորև նշված աշխատակիցներին լինելու Երևան քաղաքի ավագանու ներկայացուցիչը Հայաստանի Հանրապետության վարչական, Հայաստանի Հանրապետության վերաքննիչ վարչական դատարաններում և Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի վարչական պալատում, կատարելու Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 18-րդ հոդվածով նշված բոլոր դատավարական գործողությունները.

1) Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի իրավաբանական վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար Արմինե Ստեփանյան.

2) Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի իրավաբանական վարչության պետի տեղակալ Արամ Մարտիրոսյան.

3) Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի իրավաբանական վարչության պետի տեղակալ Լիլիթ Մարտիրոսյան.

4) Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի իրավաբանական վարչության վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերի քննության բաժնի պետ Ջավեն Սմբատյան.

5) Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի իրավաբանական վարչության հարկադիր գանձման և պարտավորությունների կատարման ապահովման բաժնի պետ Ելիզավետա Արզիկյան.

6) Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի իրավաբանական վարչության վարչական բողոքների ուսումնասիրության բաժնի պետ Հրանուշ Ներսիսյան.

7) Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի իրավաբանական վարչության դատական գործերի վարման բաժնի գլխավոր մասնագետ Լիլիթ Նարիմանյան.

8) Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի իրավաբանական վարչության դատական գործերի վարման բաժնի գլխավոր մասնագետ Լաուրա Հարությունյան.

9) Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի իրավաբանական վարչության դատական գործերի վարման բաժնի առաջատար մասնագետ Սյուզաննա Արմենակյան.

10) Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի իրավաբանական վարչության դատական գործերի վարման բաժնի առաջատար մասնագետ Նադեժդա Մուրադյան.

11) Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի իրավաբանական վարչության հարկադիր գանձման և պարտավորությունների կատարման ապահովման բաժնի գլխավոր մասնագետ Լուսինե Խաչատրյան.

12) Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի իրավաբանական վարչության վարչական բողոքների ուսումնասիրության բաժնի առաջատար մասնագետ Աննա Բադալյան:

2. Լիազորագիրը տրվում է մեկ տարի ժամկետով:

**8. Երևանի քաղաքապետի 2026 թվականի հունիսի 8-ի N 2896-Ա որոշումը հաստատելու մասին:**

ՈՐՈՇՎԵՑ - 1. Հաստատել Երևանի քաղաքապետի 2026 թվականի հունիսի 8-ի «Երևանի երիտասարդական նվագախումբ» հիմնադրամ հիմնադրելու և հիմնադրամի կանոնադրությունը հաստատելու մասին» N 2896-Ա որոշումը:

**9. Թանգարանային առարկաները ժամանակավոր պահպանության հանձնելու մասին:**

ՈՐՈՇՎԵՑ - 1. Համաձայնություն տալ «Երևան քաղաքի պատմության թանգարան» ՀՈԱԿ-ի հավաքածուին պատկանող 134 թանգարանային առարկաները 2026 թվականի հուլիսի 1-ից մինչև 2026 թվականի սեպտեմբերի 6-ը ներառյալ՝ Չինաստանի Ժողովրդական Հանրապետության Շանսի նահանգի «Շանսի թանգարան»-ին, 2026 թվականի սեպտեմբերի 7-ից մինչև 2026 թվականի դեկտեմբերի 16-ը ներառյալ՝ Չինաստանի Ժողովրդական Հանրապետության Հեբեյ նահանգի «Հեբեյ թանգարան»-ին, 2026 թվականի դեկտեմբերի 17-ից մինչև 2027 թվականի մարտի 17-ը ներառյալ՝ Չինաստանի Ժողովրդական Հանրապետության Շանդուն նահանգի «Շանդուն թանգարան»-ին ցուցահանդեսներ կազմակերպելու նպատակով ժամանակավոր պահպանության հանձնելուն՝ համաձայն հավելվածի:

**10. Թանգարանային առարկաները ժամանակավոր պահպանության հանձնելու մասին:**

ՈՐՈՇՎԵՑ - 1. Համաձայնություն տալ «Ժամանակակից արվեստի թանգարան» ՀՈԱԿ-ի հավաքածուին պատկանող Գրիգոր Խանջյանի «Մեքսիկական շարք» խորագրով 5 (հինգ) թանգարանային առարկաները 2026 թվականի սեպտեմբերի 1-ից մինչև 2027 թվականի հունվարի 15-ը «Հայաստանի ազգային պատկերասրահ» ՊՈԱԿ-ին ցուցադրության նպատակով ժամանակավոր պահպանության հանձնելուն՝ համաձայն հավելվածի:

**11. Թանգարանային առարկաները ժամանակավոր պահպանության հանձնելու մասին:**

ՈՐՈՇՎԵՑ - 1. Համաձայնություն տալ «Երևան քաղաքի պատմության թանգարան» ՀՈԱԿ-ի հավաքածուին պատկանող 38 թանգարանային առարկաները 2026 թվականի հուլիսի 1-ից սեպտեմբերի 30-ը ներառյալ «Հայաստանի ազգային գրադարան» ՊՈԱԿ-ին ցուցադրության նպատակով ժամանակավոր պահպանության հանձնելուն՝ համաձայն հավելվածի:

**12. Թանգարանային առարկաները ժամանակավոր պահպանության հանձնելու մասին:**

ՈՐՈՇՎԵՑ - 1. Համաձայնություն տալ «Ժամանակակից արվեստի թանգարան» ՀՈԱԿ-ի հավաքածուին պատկանող 55 թանգարանային առարկաները 2026 թվականի սեպտեմբերի 15-ից մինչև 2026 թվականի սեպտեմբերի 22-ը ներառյալ՝ «Մեղրիի մարզամշակութային կենտրոն» ՀՈԱԿ-ին, 2026 թվականի սեպտեմբերի 23-ից մինչև 2026 թվականի հոկտեմբերի 5-ը ներառյալ՝ «Կապանի թանգարանների միավորում» ՀՈԱԿ-ին, 2026 թվականի հոկտեմբերի 6-ից մինչև 2026 թվականի հոկտեմբերի 15-ը ներառյալ՝ «Գորիսի համայնքային պատկերասրահ» ՀՈԱԿ-ին ցուցահանդեսներ կազմակերպելու նպատակով ժամանակավոր պահպանության հանձնելուն՝ համաձայն հավելվածի:

**13. Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի Շրջանցիկ թունել փողոց հ.42/1 հասցեում մսուր-մանկապարտեզի կառուցման նախատեսվող գործունեության իրականացմանը նախնական համաձայնություն տրամադրելու մասին:**

ՈՐՈՇՎԵՑ – 1. Երևան համայնքի կողմից Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի Շրջանցիկ թունել փողոց հ.42/1 հասցեում մսուր-մանկապարտեզի կառուցման նախատեսվող գործունեության իրականացմանը տրամադրել նախնական համաձայնություն:

2. Առաջարկել Երևանի քաղաքապետին՝ սույն որոշումը, հանրային լսման արձանագրությունը, լուսանկարները կամ տեսաձայնագրությունն օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում տրամադրել լիազոր մարմնին և նախաձեռնողին:

**14. Երևան քաղաքի Աջափնյակ վարչական շրջանի Հաղթանակի 1-ին փողոց հ.70 հասցեում պահեստային շինության կառուցման նախատեսվող գործունեության իրականացմանը նախնական համաձայնություն տրամադրելու մասին:**

ՈՐՈՇՎԵՑ – 1. «ՎԵԿՏՈՐ-Ա» բաց բաժնետիրական ընկերության կողմից Երևան քաղաքի Աջափնյակ վարչական շրջանի Հաղթանակի 1-ին փողոց հ.70 հասցեում պահեստային շինության կառուցման նախատեսվող գործունեության իրականացմանը տրամադրել նախնական համաձայնություն:

2. Առաջարկել Երևանի քաղաքապետին՝ սույն որոշումը, հանրային լսման արձանագրությունը, լուսանկարները կամ տեսաձայնագրությունն օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում տրամադրել լիազոր մարմնին և նախաձեռնողին:

**15. Երևան քաղաքի Աջափնյակ վարչական շրջանի Շիրազի փողոց հ.11 հասցեում Երևանի Զորայր Խալափյանի անվան հ.156 հիմնական դպրոցի կառուցման նախատեսվող գործունեության իրականացմանը նախնական համաձայնություն տրամադրելու մասին:**

ՈՐՈՇՎԵՑ – 1. Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի պատվերով «ՀԳՇՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից ներկայացված՝ Երևան քաղաքի Աջափնյակ վարչական շրջանի Շիրազի փողոց հ.11 հասցեում Երևանի Զորայր Խալափյանի անվան հ.156 հիմնական դպրոցի կառուցման նախատեսվող գործունեության իրականացմանը տրամադրել նախնական համաձայնություն:

2. Առաջարկել Երևանի քաղաքապետին՝ սույն որոշումը, հանրային լսման արձանագրությունը, լուսանկարները կամ տեսաձայնագրությունն օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում տրամադրել լիազոր մարմնին և նախաձեռնողին:

**16. Երևան քաղաքի Աջափնյակ վարչական շրջանի Արզումանյան փողոց հ.17 հասցեում բազմահարկ բնակելի շենքի կառուցման նախատեսվող գործունեության իրականացմանը նախնական համաձայնություն տրամադրելու մասին:**

ՈՐՈՇՎԵՑ – 1. Երևան համայնքի կողմից Երևան քաղաքի Աջափնյակ վարչական շրջանի Արզումանյան փողոց հ.17 հասցեում բազմահարկ բնակելի շենքի կառուցման նախատեսվող գործունեության իրականացմանը տրամադրել նախնական համաձայնություն:

2. Առաջարկել Երևանի քաղաքապետին՝ սույն որոշումը, հանրային լսման արձանագրությունը, լուսանկարները կամ տեսաձայնագրությունն օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում տրամադրել լիազոր մարմնին և նախաձեռնողին:

**17. Երևան քաղաքի Աջափնյակ վարչական շրջանի Արզումանյան փողոց հ.10 հասցեում բազմահարկ բնակելի շենքի կառուցման նախատեսվող գործունեության իրականացմանը նախնական համաձայնություն տրամադրելու մասին:**

ՈՐՈՇՎԵՑ – 1. Երևան համայնքի կողմից Երևան քաղաքի Աջափնյակ վարչական շրջանի Արզումանյան փողոց հ.10 հասցեում բազմահարկ բնակելի շենքի կառուցման նախատեսվող գործունեության իրականացմանը տրամադրել նախնական համաձայնություն:

2. Առաջարկել Երևանի քաղաքապետին՝ սույն որոշումը, հանրային լսման արձանագրությունը, լուսանկարները կամ տեսաձայնագրությունն օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում տրամադրել լիազոր մարմնին և նախաձեռնողին:

**18. Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի Այգեստան 11-րդ փողոց հ.93 բնակելի տուն, հ.93/1, հ.97 բնակելի տուն և Գ.Ջահուկյան փողոց հ.95/2 հասցեներում բազմաբնակարան բնակելի շենքի կառուցման նախատեսվող գործունեության իրականացմանն անհամաձայնություն տրամադրելու մասին:**

ՈՐՈՇՎԵՑ – 1. «ՊՐՈՍՊԵԿՏ24» փակ բաժնետիրական ընկերության կողմից ներկայացված՝ Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի Այգեստան 11-րդ փողոց հ. 93 բնակելի տուն, հ.93/1, հ.97 բնակելի տուն և Գ.Ջահուկյան փողոց հ. 95/2 հասցեներում բազմաբնակարան բնակելի շենքի կառուցման նախատեսվող գործունեության իրականացմանն տրամադրել անհամաձայնություն, հետևյալ պատճառաբանությամբ.

1) Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի Այգեստան 11-րդ փողոց հ.93 բնակելի տուն, հ.93/1, հ.97 բնակելի տուն և Գ. Ջահուկյան փողոց հ. 95/2 հասցեներում բազմաբնակարան բնակելի շենքի կառուցման նախագծման աշխատանքների համար հիմք է հանդիսանում Երևան համայնքի 2024 թվականի դեկտեմբերի 13-ի հ.01/50-01-673-24 նախագծման թույլտվությունը: Նախաձեռնողի կողմից ներկայացված էսքիզային նախագիծը չի համապատասխանում նախագծման թույլտվության համար հիմք հանդիսացած էսքիզային նախագծի ճարտարապետական լուծումներին, այսինքն տվյալ նախատեսվող գործունեության դեպքում չեն պահպանվում նախագծման թույլտվությամբ սահմանված պահանջները:

2. Առաջարկել Երևանի քաղաքապետին՝ սույն որոշումը, հանրային լսման արձանագրությունը, լուսանկարները կամ տեսաձայնագրությունն օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում տրամադրել լիազոր մարմնին և նախաձեռնողին:

**19. Սանհանգույցների վերանորոգման նախագիծը որպես նվիրատվություն ընդունելու մասին:**

ՈՐՈՇՎԵՑ – 1. Երևանի քաղաքապետարանի «Երևաննախագիծ» ՓԲԸ-ից որպես նվիրատվություն ընդունել Երևանի Կենտրոն վարչական շրջանի Արգիշտիի 1 հասցեում գտնվող Երևանի քաղաքապետարանի վարչական շենքի սանհանգույցների վերանորոգման նախագիծը՝ համաձայն կից հավելվածի:

**20. Կազմակերպված ծառայողական ավտոկայանատեղերի շահագործումը շարունակելու իրավունք տալու մասին:**

ՈՐՈՇՎԵՑ-1.Թույլատրել սույն որոշման հավելվածում նշված կազմակերպություններին՝ 2026 թվականի ընթացքում շարունակել հավելվածում նշված տարածքներում և սահմանված պայմաններով նախորդ տարիներին կազմակերպված ծառայողական ավտոկայանատեղերի շահագործումը:

**21. Կազմակերպված ծառայողական ավտոկայանատեղի շահագործումը շարունակելու իրավունք տալու մասին:**

ՈՐՈՇՎԵՑ - 1. Թույլատրել սույն որոշման հավելվածում նշված կազմակերպությանը՝ 2026 թվականի ընթացքում շարունակել հավելվածում նշված տարածքում և սահմանված պայմաններով նախորդ տարիներին կազմակերպված ծառայողական ավտոկայանատեղի շահագործումը:

**22. Ծառայողական ավտոկայանատեղ կազմակերպելու իրավունք տալու մասին:**

ՈՐՈՇՎԵՑ - 1.Թույլատրել սույն որոշման հավելվածում նշված կազմակերպությանը՝ 2026 թվականի ընթացքում հավելվածում նշված տարածքում և սահմանված պայմաններով կազմակերպել ծառայողական ավտոկայանատեղ:

**23. Ծառայողական ավտոկայանատեղ կազմակերպելու իրավունք տալու մասին:**

ՈՐՈՇՎԵՑ - 1.Թույլատրել սույն որոշման հավելվածում նշված կազմակերպությանը՝ 2026 թվականի ընթացքում հավելվածում նշված տարածքում և սահմանված պայմաններով կազմակերպել ծառայողական ավտոկայանատեղ:

**24. Ծառայողական ավտոկայանատեղ կազմակերպելու իրավունք տալու մասին:**

ՈՐՈՇՎԵՑ - 1.Թույլատրել սույն որոշման հավելվածում նշված կազմակերպությանը՝ 2026 թվականի ընթացքում հավելվածում նշված տարածքում և սահմանված պայմաններով կազմակերպել ծառայողական ավտոկայանատեղ:

**25. Ծառայողական ավտոկայանատեղ կազմակերպելու իրավունք տալու մասին:**

ՈՐՈՇՎԵՑ - 1. Թույլատրել սույն որոշման հավելվածում նշված կազմակերպությանը՝ 2026 թվականի ընթացքում հավելվածում նշված տարածքում և սահմանված պայմաններով կազմակերպել ծառայողական ավտոկայանատեղ:

**26. «Երևանի ավտոբուս» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրական կապիտալն ավելացնելու և կանոնադրության փոփոխությունը հաստատելու մասին:**

ՈՐՈՇՎԵՑ - 1. Հաստատել «Երևանի ավտոբուս» փակ բաժնետիրական ընկերության՝ Երևան քաղաքի 2025 թվականի բյուջեից բաժնետոմսերի և կանոնադրական կապիտալում մասնակցության ձեռքբերման նպատակով հատկացված 2,000,000,000 (երկու միլիարդ) ՀՀ դրամի սահմաններում՝ կանոնադրական կապիտալի՝ 2,000,000,000 (երկու միլիարդ) դրամի չափով ավելացմամբ պայմանավորված՝ Երևան համայնքի կողմից լրացուցիչ ձեռք բերված 200,000 (երկու հարյուր հազար) հատ հասարակ (սովորական) բաժնետոմսերի՝ յուրաքանչյուրը՝ 10,000 (տասը հազար) դրամ անվանական արժեքով տեղաբաշխման արդյունքները:

2. «Երևանի ավտոբուս» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրական կապիտալը սահմանել 18,188,380,000 (տասնութ միլիարդ հարյուր ութսունութ միլիոն երեք հարյուր ութսուն հազար) ՀՀ դրամ, որը կազմում է 1,818,838 (մեկ միլիոն ութ հարյուր տասնութ հազար ութ հարյուր երեսունութ) հատ 10.000 (տասը հազար) ՀՀ դրամ անվանական արժեքով հասարակ (սովորական) բաժնետոմսեր:

3. Հաստատել «Երևանի ավտոբուս» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրության փոփոխությունը՝ համաձայն հավելվածի:

**27. «Սուրբ Աստվածամայր» բժշկական կենտրոն փակ բաժնետիրական ընկերության կանոնադրական կապիտալն ավելացնելու և կանոնադրության փոփոխությունը հաստատելու մասին:**

ՈՐՈՇՎԵՑ - 1. Հաստատել «Սուրբ Աստվածամայր» բժշկական կենտրոն փակ բաժնետիրական ընկերության՝ Երևան քաղաքի 2025 թվականի բյուջեից բաժնետոմսերի և կանոնադրական կապիտալում մասնակցության ձեռքբերման նպատակով հատկացված 65,000,000 (վաթսունհինգ միլիոն) ՀՀ դրամի սահմաններում՝ կանոնադրական կապիտալի՝ 64,998,000 (վաթսունչորս միլիոն ինը հարյուր իննսունութ հազար) դրամի չափով ավելացմամբ պայմանավորված՝ Երևան համայնքի կողմից լրացուցիչ ձեռք բերված 21,666 (քսանմեկ հազար վեց հարյուր վաթսունվեց) հատ հասարակ (սովորական) բաժնետոմսերի՝ յուրաքանչյուրը՝ 3,000 (երեք հազար) դրամ անվանական արժեքով տեղաբաշխման արդյունքները:

2. «Սուրբ Աստվածամայր» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրական կապիտալը սահմանել 293,919,000 (երկու հարյուր իննսուներեք միլիոն ինը հարյուր տասնինը հազար) ՀՀ դրամ, որը կազմում է 97,973 (իննսունյոթ հազար ինը հարյուր

յոթանասուներեք) հատ 3,000 (երեք հազար) ՀՀ դրամ անվանական արժեքով հասարակ (սովորական) բաժնետոմսեր:

3. Հաստատել «Սուրբ Աստվածամայր» բժշկական կենտրոն փակ բաժնետիրական ընկերության կանոնադրության փոփոխությունը՝ համաձայն հավելվածի:

**28. «Թիվ 4 պոլիկլինիկա» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրական կապիտալն ավելացնելու և կանոնադրության փոփոխությունը հաստատելու մասին:**

ՈՐՈՇՎԵՑ - 1. Հաստատել «Թիվ 4 պոլիկլինիկա» փակ բաժնետիրական ընկերության՝ Երևան քաղաքի 2025 թվականի բյուջեից բաժնետոմսերի և կանոնադրական կապիտալում մասնակցության ձեռքբերման նպատակով հատկացված 18,900,000 (տասնութ միլիոն ինը հարյուր հազար) ՀՀ դրամի սահմաններում՝ կանոնադրական կապիտալի՝ 18,899,424 (տասնութ միլիոն ութ հարյուր իննսունինը հազար չորս հարյուր քսանչորս) դրամի չափով ավելացմամբ պայմանավորված՝ Երևան համայնքի կողմից լրացուցիչ ձեռք բերված 13,152 (տասներեք հազար մեկ հարյուր հիսուներկու) հատ հասարակ (սովորական) բաժնետոմսերի՝ յուրաքանչյուրը՝ 1,437 (մեկ հազար չորս հարյուր երեսունյոթ) դրամ անվանական արժեքով տեղաբաշխման արդյունքները:

2. «Թիվ 4 պոլիկլինիկա» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրական կապիտալը սահմանել 47,290,233 (քառասունյոթ միլիոն երկու հարյուր իննսուն հազար երկու հարյուր երեսուներեք) ՀՀ դրամ, որը կազմում է 32,909 (երեսուներկու հազար ինը հարյուր ինը) հատ 1,437 (մեկ հազար չորս հարյուր երեսունյոթ) ՀՀ դրամ անվանական արժեքով հասարակ (սովորական) բաժնետոմսեր:

3. Հաստատել «Թիվ 4 պոլիկլինիկա» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրության փոփոխությունը՝ համաձայն հավելվածի:

**29. «Մալաթիա-Սեբաստիա առողջության կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրական կապիտալն ավելացնելու և կանոնադրության փոփոխությունը հաստատելու մասին:**

ՈՐՈՇՎԵՑ - 1. Հաստատել «Մալաթիա-Սեբաստիա առողջության կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության՝ Երևան քաղաքի 2025 թվականի բյուջեից բաժնետոմսերի և կանոնադրական կապիտալում մասնակցության ձեռքբերման նպատակով հատկացված 18,900,000 (տասնութ միլիոն ինը հարյուր հազար) ՀՀ դրամի սահմաններում՝ կանոնադրական կապիտալի՝ 18,900,000 (տասնութ միլիոն ինը հարյուր հազար) դրամի չափով ավելացմամբ պայմանավորված՝ Երևան համայնքի կողմից լրացուցիչ ձեռք բերված 1,890 (մեկ հազար ութ հարյուր իննսուն) հատ հասարակ (սովորական) բաժնետոմսերի՝ յուրաքանչյուրը՝ 10,000 (տասը հազար) դրամ անվանական արժեքով տեղաբաշխման արդյունքները:

2. «Մալաթիա-Սեբաստիա առողջության կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրական կապիտալը սահմանել 27,060,000 (քսանյոթ միլիոն

վաթսուն հազար) ՀՀ դրամ, որը կազմում է 2,706 (երկու հազար յոթ հարյուր վեց) հատ 10,000 (տասը հազար) ՀՀ դրամ անվանական արժեքով հասարակ (սովորական) բաժնետոմսեր:

3. Հաստատել «Մալաթիա-Սեբաստիա առողջության կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրության փոփոխությունը՝ համաձայն հավելվածի:

**30. «Երևանի «Տիգրան Մեծ» առողջության կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրական կապիտալն ավելացնելու և կանոնադրության փոփոխությունը հաստատելու մասին:**

ՈՐՈՇՎԵՑ - 1. Հաստատել «Երևանի «Տիգրան Մեծ» առողջության կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության՝ Երևան քաղաքի 2025 թվականի բյուջեից բաժնետոմսերի և կանոնադրական կապիտալում մասնակցության ձեռքբերման նպատակով հատկացված 18,900,000 (տասնութ միլիոն ինը հարյուր հազար) ՀՀ դրամի սահմաններում՝ կանոնադրական կապիտալի՝ 18,893,347 (տասնութ միլիոն ութ հարյուր իննսուներեք հազար երեք հարյուր քառասունյոթ) դրամի չափով ավելացմամբ պայմանավորված՝ Երևան համայնքի կողմից լրացուցիչ ձեռք բերված 2,257 (երկու հազար երկու հարյուր հիսունյոթ) հատ հասարակ (սովորական) բաժնետոմսերի՝ յուրաքանչյուրը՝ 8,371 (ութ հազար երեք հարյուր յոթանասունմեկ) դրամ անվանական արժեքով տեղաբաշխման արդյունքները:

2. «Երևանի «Տիգրան Մեծ» առողջության կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրական կապիտալը սահմանել 41,997,307 (քառասունմեկ միլիոն ինը հարյուր իննսունյոթ հազար երեք հարյուր յոթ) ՀՀ դրամ, որը կազմում է 5,017 (հինգ հազար տասնյոթ) հատ 8,371 (ութ հազար երեք հարյուր յոթանասունմեկ) ՀՀ դրամ անվանական արժեքով հասարակ (սովորական) բաժնետոմսեր:

3. Հաստատել «Երևանի «Տիգրան Մեծ» առողջության կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրության փոփոխությունը՝ համաձայն հավելվածի:

**31. «Երևան համայնքի սեփականություն համարվող 50 տոկոսից ավելի բաժնեմաս ունեցող փակ բաժնետիրական ընկերությունների կողմից 2025 թվականի տարեկան գործունեության արդյունքներով առաջացած զուտ շահույթի բաշխման ուղղությունները և Երևան քաղաքի բյուջե վճարման ենթակա շահութաբաժինների չափերը հաստատելու մասին:**

ՈՐՈՇՎԵՑ - 1. Հաստատել Երևան համայնքի սեփականություն համարվող 50 տոկոսից ավելի բաժնեմաս ունեցող փակ բաժնետիրական ընկերությունների 2025 թվականի տարեկան գործունեության արդյունքներով առաջացած զուտ շահույթի բաշխման ուղղությունները և Երևան քաղաքի բյուջե վճարման ենթակա շահութաբաժինների չափերը՝ համաձայն հավելվածի:

2. Սահմանել, որ սույն որոշման հավելվածում նշված կազմակերպությունների կողմից շահութաբաժինների վճարումները Երևան քաղաքի բյուջե կատարվում են եռամսյա ժամկետում (ամսական հավասար չափերով), բայց ոչ ուշ, քան մինչև 2026 թվականի հոկտեմբերի 1-ը:

**32. Երևան քաղաքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 26-ի N 41-Ա որոշման մեջ փոփոխություններ և լրացում կատարելու մասին:**

ՈՐՈՇՎԵՑ - 1. Երևան քաղաքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 26-ի «Երևանի քաղաքապետարանի և վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմերի կառուցվածքը, հաստիքացուցակը, աշխատակիցների թվաքանակը, Երևանի քաղաքապետի, նրա տեղակալների, խորհրդականների, օգնականների, մամուլի քարտուղարի, քաղաքապետարանի աշխատակազմի աշխատակիցների, վարչական շրջանների ղեկավարների, ղեկավարների տեղակալների, վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմերի աշխատակիցների պաշտոնային դրույքաչափերը հաստատելու և Երևան քաղաքի ավագանու 2018 թվականի հոկտեմբերի 29-ի N10-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N41-Ա որոշման N 2 հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները.

1) «I. Կառուցվածքային ստորաբաժանումներ» բաժնի «Շինարարության և բարեկարգման վարչություն» գլուխը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | **Շինարարության և բարեկարգման վարչություն** | | | | |
| 1 | վարչության պետ | 1 | 697,000 | | 697,000 |
| 2 | վարչության պետի տեղակալ | 2 | 561,000 | | 1,122,000 |
| 3 | գործավար | 1 | 248,200 | | 248,200 |
| - | **Շինարարական ծրագրերի կառավարման բաժին** | | | | |
| 4 | բաժնի պետ | 1 | 408,000 | | 408,000 |
| 5 | գլխավոր մասնագետ | 3 | 289,000 | | 867,000 |
| 6 | առաջատար մասնագետ | 3 | 282,200 | | 846,600 |
| - | **Շինարարական աշխատանքների պայմանագրերի կառավարման և վերլուծությունների բաժին** | | | | |
| 7 | բաժնի պետ | 1 | 408,000 | | 408,000 |
| 8 | գլխավոր մասնագետ | 2 | 289,000 | | 578,000 |
| 9 | առաջատար մասնագետ | 2 | 282,200 | | 564,400 |
| 10 | առաջին կարգի մասնագետ | 1 | 272,000 | | 272,000 |
| - | **Ճանապարհների շահագործման և սպասարկման բաժին** | | | | |
| 11 | բաժնի պետ | 1 | 408,000 | | 408,000 |
| 12 | գլխավոր մասնագետ | 2 | 289,000 | | 578,000 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 13 | առաջատար մասնագետ | 1 | 282,200 | | 282,200 |
| 14 | առաջին կարգի մասնագետ | 1 | 272,000 | | 272,000 |
| - | **Շինարարական օբյեկտների ծրագիր** | | | | |
| 15 | ծրագրի ղեկավար | 1 | 474,000 | | 474,000 |
| 16 | պատասխանատու ինժեներ | 10 | 408,000 | | 4,080,000 |
| - | **Ճանապարհների միջին նորոգման և հիմնանորոգման ծրագիր** | | | | |
| 17 | ծրագրի ղեկավար | 1 | 474,000 | | 474,000 |
| 18 | պատասխանատու ինժեներ | 11 | 408,000 | | 4,488,000 |
| - | **Շինարարական ծրագրերի մոնիտորինգի և վերլուծությունների խումբ** | | | | |
| 19 | խմբի ղեկավար | 1 | 474,000 | | 474,000 |
| 20 | մասնագետ | 6 | 408,000 | | 2,448,000 |
| | **ԸՆԴԱՄԵՆԸ** | **52.0** | | | **19,989,400** |

»,

2) «I. Կառուցվածքային ստորաբաժանումներ» բաժնի «Տրանսպորտի վարչություն» գլուխը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | **Տրանսպորտի վարչություն** | | | | |
| 1 | վարչության պետ | 1 | 697,000 | | 697,000 |
| 2 | վարչության պետի տեղակալ | 1 | 561,000 | | 561,000 |
| 3 | պատասխանատու ինժեներ | 3 | 408,000 | | 1,224,000 |
| - | **Հասարակական տրանսպորտի կարգավորման բաժին** | | | | |
| 4 | բաժնի պետ | 1 | 408,000 | | 408,000 |
| 5 | գլխավոր մասնագետ | 2 | 289,000 | | 578,000 |
| 6 | առաջատար մասնագետ | 5 | 282,200 | | 1,411,000 |
| - | **Երթևեկության կառավարման բաժին** | | | | |
| 7 | բաժնի պետ | 1 | 408,000 | | 408,000 |
| 8 | գլխավոր մասնագետ | 2 | 289,000 | | 578,000 |
| 9 | առաջատար մասնագետ | 4 | 282,200 | | 1,128,800 |
| | **ԸՆԴԱՄԵՆԸ** | **20.0** | | | **6,993,800** |

»,

3) «I. Կառուցվածքային ստորաբաժանումներ» բաժնի «ԱՄԲՈՂՋԸ՝ Երևանի քաղաքապետարան»» տողում «821.0» և «277,610,345» թվերը փոխարինել համապատասխանաբար «829.0» և «280,874,345» թվերով,

4) «II. Առանձնացված ստորաբաժանումներ» բաժնի «3.6. Կենտրոն վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմ» գլխում.

ա. «3.6. Կենտրոն վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմ» գլխի՝

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 3 | վարչական շրջանի ղեկավարի տեղակալ | 2 | 714,000 | | 1,428,000 |

տողից հետո լրացնել նոր՝ 3.1 տող՝ հետևյալ բովանդակությամբ.

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 3.1 | աշխատակազմի առանձին գործառույթների իրականացման խորհրդատու | 2 | 310,000 | | 620,000 |

բ. «3.6. Կենտրոն վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմ» գլխի «9. առաջատար մասնագետ-հասարակայնության հետ կապերի պատասխանատու» տողին հաջորդող «ԸՆԴԱՄԵՆԸ» տողում «10.0» և «4,804,200» թվերը փոխարինել համապատասխանաբար «12.0» և «5,424,200» թվերով,

գ. «Եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժին» կետի «4. առաջատար մասնագետ» տողում «10» և «2,822,000» թվերը փոխարինել համապատասխանաբար «9» և «2,539,800» թվերով, իսկ «ԸՆԴԱՄԵՆԸ» տողում «28» և «7,990,000» թվերը փոխարինել համապատասխանաբար «27» և «7,707,800» թվերով,

դ. «ԱՄԲՈՂՋԸ» տողում «223.0» և «59,574,600» թվերը փոխարինել համապատասխանաբար «224.0» և «59,912,400» թվերով,

5) «ԱՄԲՈՂՋԸ՝ վարչական շրջաններ» տողում «1,564.0» և «429,075,600» թվերը փոխարինել համապատասխանաբար «1,565.0» և «429,413,400» թվերով,

6) «ԸՆԴԱՄԵՆԸ՝ առանձնացված ստորաբաժանումներ» տողում «1,658.0» և «457,754,600» թվերը փոխարինել համապատասխանաբար «1,659.0» և «458,092,400» թվերով,

7) «ԱՄԲՈՂՋԸ» տողում «2,479.0» և «735,364,945» թվերը փոխարինել համապատասխանաբար «2,488.0» և «738,966,745» թվերով:

2. Սույն որոշումը համայնքային ծառայության հաստիքների մասով ուժի մեջ է մտնում համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում համապատասխան փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի համապատասխան իրավական ակտն ուժի մեջ մտնելու պահից:

**33. Երևան քաղաքի ավագանու 2025 թվականի դեկտեմբերի 23-ի N 483-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:**

ՈՐՈՇՎԵՑ - 1. Երևան քաղաքի ավագանու 2025 թվականի դեկտեմբերի 23-ի «Երևան քաղաքի 2026 թվականի բյուջեն հաստատելու մասին» N 483-Ն որոշման NN 1, 2, 3, 6 և 7 հավելվածներում կատարել փոփոխություններ՝ համաձայն NN 1-5 հավելվածների:

**34. Երևան քաղաքի ավագանու 2026 թվականի ապրիլի 21-ի N 544-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին**:

ՈՐՈՇՎԵՑ - 1. Երևան քաղաքի ավագանու 2026 թվականի ապրիլի 21-ի «Երևան քաղաքի ավագանու 2025 թվականի դեկտեմբերի 23-ի N 482-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին» N 544-Ն որոշման 3-րդ կետում «հուլիսի 31-ը» բառերը փոխարինել «դեկտեմբերի 31-ը» բառերով:

**35. Երևան քաղաքի ավագանու 2025 թվականի դեկտեմբերի 23-ի N 463-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին:**

ՈՐՈՇՎԵՑ - 1. Երևան քաղաքի ավագանու 2025 թվականի դեկտեմբերի 23-ի «Երևան քաղաքի սեփականություն հանդիսացող գույքը օգտագործման տրամադրելու և օտարման 2026 թվականի ծրագրի (ներառյալ՝ իրավաբանական անձի կանոնադրական կապիտալում համայնքի մասնակցության) վերաբերյալ» N463-Ն որոշման 1-ին կետով հաստատված հավելվածի 6-րդ գլխի աղյուսակը լրացնել նոր՝ 51-80-րդ կետերով՝ համաձայն հավելվածի:

**36. Հողամասերի փոխանակությանը համաձայնություն տալու մասին:**

ՈՐՈՇՎԵՑ - 1. Համաձայնություն տալ «ՋԻ ԷՄ ԴԵՎԵԼՈՓԵՐ» ՍՊ ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող Ամիրյան փողոց հ.28/2 (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման 20.10.2025թ. N20102025-01-0443 վկայական) հասցեում գտնվող 0.02628հա, Ամիրյան փողոց հ.28/5 (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման 22.05.2026թ. N 22052026-01-0253 վկայական) հասցեում գտնվող 0.00627հա, Ամիրյան փողոց հ.80/12 (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման 22.05.2026թ. N22052026-01-0369 վկայական) 0.005829 հա և Ամիրյան փողոց հ.80/15 (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման 22.05.2026թ. N 22052026-01-0360 վկայական) 0.00595հա՝ ընդհանուր 0.0443.29հա մակերեսներով հողամասերը տարածագնահատման 2-րդ գոտում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող Ամիրյան, Սարյան և Բուզանդի փողոցներով սահմանափակված 0.0426612հա, 0.0000999հա, 0.0002775հա 0.0007269հա և 0.0005635հա մակերեսներով՝ ընդհանուր 0.0443.29հա հողամասերի հետ փոխանակելուն:

**37. Գույքը սեփականության իրավունքով անհատույց օտարելու (նվիրելու) մասին:**

ՈՐՈՇՎԵՑ - 1. Երևան համայնքի սեփականություն համարվող գույքը (թվով 504 վերելակներ), ընդհանուր 4,151,358,792 (չորս միլիարդ մեկ հարյուր հիսունմեկ միլիոն երեք հարյուր հիսունութ հազար յոթ հարյուր իննսուներկու դրամ) ՀՀ դրամ արժեքով, սեփականության իրավունքով անհատույց օտարել (նվիրել) բազմաբնակարան շենքերի շինությունների սեփականատերերին ի դեմս շենքի ընդհանուր բաժնային սեփականության կառավարումն իրականացնող կառավարման մարմիններին՝ համաձայն հավելվածի:

2. Երևանի քաղաքապետին՝ ապահովել սույն որոշման հավելվածում նշված բազմաբնակարան շենքերի կառավարման մարմինների հետ նվիրատվության պայմանագրերի և վերելակների հանձնման-ընդունման ակտերի կնքումը:

3. Ընդունել ի գիտություն, որ սույն որոշման հավելվածում նշված բազմաբնակարան շենքերի կառավարման մարմինները պարտավոր են անհատույց սեփականության իրավունքով փոխանցված վերելակների ընթացիկ սպասարկումն իրականացնել նվիրատվության պայմանագրով սահմանված պահանջներին համապատասխան:

**38. Գույքը սեփականության իրավունքով անհատույց օտարելու (նվիրելու) մասին:**

ՈՐՈՇՎԵՑ - 1. Երևան քաղաքի 2025 թվականի բյուջեի «Վարչական օբյեկտների կառուցում և հիմնանորոգում» ծրագրով ձեռք բերված 17,799,600 (տասնյոթ միլիոն յոթ հարյուր իննսունինը հազար վեց հարյուր դրամ) ՀՀ դրամ ընդհանուր արժեքով թվով 2 (երկու) վերելակները սեփականության իրավունքով անհատույց օտարել (նվիրել) «Երևանի «Արաբկիր» առողջության կենտրոն» ՓԲ ընկերությանը:

2. Երևանի քաղաքապետին՝ ապահովել «Երևանի «Արաբկիր» առողջության կենտրոն» ՓԲ ընկերության հետ նվիրատվության պայմանագրի և հանձնման-ընդունման ակտի կնքումը:

**39. Երևան քաղաքում Անանիա Շիրակացու անվամբ փողոց անվանակոչելու մասին:**

ՈՐՈՇՎԵՑ - 1. Երևան քաղաքի Աջափնյակ վարչական շրջանի Սիլիկյան թաղամասի 12-րդ փողոցն (զուգահեռ է Սիլիկյան 11-րդ փողոցին) անվանակոչել մաթեմատիկոս, աստղագետ, պատմաբան, փիլիսոփա Անանիա Շիրակացու անվամբ՝ «Անանիա Շիրակացու փողոց»:

**40. Երևան քաղաքում Կոստանդին Երզնկացու անվամբ փողոց անվանակոչելու մասին:**

ՈՐՈՇՎԵՑ – 1. Երևան քաղաքի Աջափնյակ վարչական շրջանի Սիլիկյան թաղամասի 3-րդ փողոցն (զուգահեռ է Մխիթար Սեբաստացու փողոցին) անվանակոչել հայ միջնադարյան նշանավոր տաղերգու, բանաստեղծ Կոստանդին Երզնկացու անվամբ՝ «Կոստանդին Երզնկացու փողոց»:

**41. Երևան քաղաքում Ավետ Տերտերյանի անվամբ փողոց անվանակոչելու մասին:**

ՈՐՈՇՎԵՑ – 1. Երևան քաղաքի Աջափնյակ վարչական շրջանի Սիլիկյան թաղամասի 7-րդ փողոցն (սկսում է Սիլիկյան 7-րդ փողոցի 2/6 հասցեի հարակից տարածքից հասնում մինչև Սիլիկյան 7-րդ փողոցի 102/1 հասցեի հարակից տարածք) անվանակոչել հայ կոմպոզիտոր, ժողովրդական արտիստ Ավետ Տերտերյանի անվամբ՝ «Ավետ Տերտերյան փողոց»:

**42. Երևան քաղաքում Գրիգոր Եղիազարյանի անվամբ փողոց անվանակոչելու մասին:**

ՈՐՈՇՎԵՑ – 1. Երևան քաղաքի Աջափնյակ վարչական շրջանի Սիլիկյան թաղամասի 11-րդ փողոցն (զուգահեռ է Սիլիկյան 12-րդ փողոցին) անվանակոչել հայ կոմպոզիտոր Գրիգոր Եղիազարյանի անվամբ՝ «Գրիգոր Եղիազարյան փողոց»:

**43. Երևան քաղաքում Էդուարդ Բաղդասարյանի անվամբ փողոց անվանակոչելու մասին:**

ՈՐՈՇՎԵՑ – 1. Երևան քաղաքի Աջափնյակ վարչական շրջանի Սիլիկյան թաղամասի 13-րդ փողոցն (զուգահեռ է Սիլիկյան թաղամասի 12-րդ փողոցին) անվանակոչել հայ կոմպոզիտոր Էդուարդ Բաղդասարյանի անվամբ՝ «Էդուարդ Բաղդասարյան փողոց»:

**44. Երևան քաղաքում փողոց անվանափոխելու մասին:**

ՈՐՈՇՎԵՑ – 1. Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի Արսեն Ամիրյան փողոցը՝ (սկսվում է Հանրապետության հրապարակից, հասնում՝ Սարյան փողոց) անվանափոխել Պապ թագավորի անվամբ՝ «Պապ թագավորի փողոց»:

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ –** կողմ՝ 31, դեմ՝ 15, ձեռնպահ՝ 1

Որոշումներն ընդունվել են ձայների մեծամասնությամբ:

Երևանի քաղաքապետ Տիգրան Ավինյանը տեղեկացրեց, որ այժմ քննարկման է ներկայացվում 2026 թվականի հունիսի 23-ի հերթական նիստի զեկուցվող հարցը.

**45. Գույքի նվիրատվության մասին:**

Երևանի քաղաքապետ Տիգրան Ավինյանը տեղեկացրեց, որ Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային՝ իրավական հարցերի մշտական հանձնաժողովի կողմից «Գույքի նվիրատվության մասին» նախագծի վերաբերյալ տրվել է դրական եզրակացություն:

**ԶԵԿՈՒՑԵՑ**–Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի տրանսպորտի վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար Գարեգին Գրիգորյանը:

**ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ** - Հարցեր ուղղելու համար գրանցվել են ավագանու 6 անդամ.

1. Ռոբերտ Ծովյան – Երևանի ավագանու «Ազգային առաջընթաց» խմբակցության անդամ,
2. Արշակ Սարգսյան - Երևանի ավագանու «Մայր Հայաստան» խմբակցության անդամ,
3. Տիգրան Պետրոսյան - Երևանի ավագանու «Ազգային առաջընթաց» խմբակցության անդամ,
4. Մեսրոպ Մանուկյան - Երևանի ավագանու «Մայր Հայաստան» խմբակցության անդամ,

5. Վահան Ավագյան – Երևանի ավագանու «Հանրային ձայն» խմբակցության ղեկավար,
6. Իոսիֆ Կուբատյան - Երևանի ավագանու «Ազգային առաջընթաց» խմբակցության անդամ:

Բարձրացված հարցերի վերաբերյալ պարզաբանումներ ներկայացրեցին Երևանի քաղաքապետ Տ. Ավինյանը, Երևանի քաղաքապետի տեղակալ Ս. Գրիգորյանը և քաղաքապետարանի աշխատակազմի շինարարության և բարեկարգման վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար Ա. Թևոսյանը:

**ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ –** ելույթների համար գրանցվել է ավագանու 11 անդամ.

1. Վահան Ավագյան – Երևանի ավագանու «Հանրային ձայն» խմբակցության ղեկավար,
2. Մեսրոպ Մանուկյան - Երևանի ավագանու «Մայր Հայաստան» խմբակցության անդամ,
3. Միքայել Խաչատրյան – Երևանի ավագանու «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության անդամ,
4. Քրիստինե Վարդանյան - Երևանի ավագանու «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության անդամ:

Արտահերթ ելույթով հանդես եկավ Երևանի քաղաքապետի տեղակալ Սուրեն Գրիգորյանը:

5. Արամ Թորոսյան - Երևանի ավագանու «Ազգային առաջընթաց» խմբակցության ղեկավար,
6. Նատալյա Սինորյան - Երևանի ավագանու «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության անդամ,
7. Արմեն Գալջյան - Երևանի ավագանու «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության ղեկավար,
8. Արևիկ Բլեջյանց - Երևանի ավագանու «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության անդամ,
9. Լևոն Լևոնյան - Երևանի ավագանու «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության անդամ,
10. Ջինա Չալիկյան - Երևանի ավագանու «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության անդամ,
11. Հայկ Միրզոյան - Երևանի ավագանու «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության անդամ:

Ղեկավարվելով Երևանի ավագանու 2009 թվականի հունիսի 18-ի N 1-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 71-րդ կետի 13-րդ ենթակետով՝ Երևանի ավագանու «Ազգային առաջընթաց» խմբակցության անունից չհերթագրված, արտահերթ մեկ ելույթով հանդես եկավ խմբակցության ղեկավար Արամ Թորոսյանը, «Հանրապետություն» խմբակցության անունից՝ խմբակցության ղեկավար Անի Խաչատրյանը,

«Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության անունից՝ խմբակցության ղեկավար Արմեն Գալջյանը:

Ելույթով հանդես եկավ Երևանի քաղաքապետ Տիգրան Ավինյանը:

**ՈՐՈՇՎԵՑ –** 1. Երևան քաղաքի 2025 թվականի բյուջեի «Պետական աջակցությամբ իրականացվող հանրային տրանսպորտի շարժակազմերի համալրում և արդիականացում» ծրագրով և Երևան քաղաքի 2026 թվականի բյուջեի «Տրանսպորտային համակարգի արդիականացում» ծրագրով՝ 4,326,300,000.00 (չորս միլիարդ երեք հարյուր քսանվեց միլիոն երեք հարյուր հազար) ՀՀ դրամ ընդհանուր արժողությամբ ձեռք բերված թվով 45 հատ YUTONG ZK6128BEVG մակնիշի տրոլեյբուսները սեփականության իրավունքով անհատույց օտարել (նվիրել) «Երևանի էլեկտրատրանսպորտ» փակ բաժնետիրական ընկերությանը:

2. Երևանի քաղաքապետին՝ ապահովել «Երևանի էլեկտրատրանսպորտ» փակ բաժնետիրական ընկերության հետ նվիրատվության պայմանագրի և հանձնման-ընդունման ակտի կնքումը

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ –** կողմ՝ 43, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0

Որոշումն ընդունվել է միաձայն:

**ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ**

Կազմեց
Ն. Ղուկասյանը